ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1353-Ա « 09 » ապրիլի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի հ.13-Ն հրամանով.

1. Հաստատել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման համայնքային ծառայության թվով 1 թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթն անցկացվելու է Երևանի քաղաքապետարանի՝ Արգիշտիի փողոց հ.1 հասցեում գտնվող վարչական շենքի 5-րդ հարկի խորհրդակցությունների անցկացման հ.1 դահլիճում:

3. Հանձնարարել.

3.1 Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությանը՝ ապահովել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման համայնքային ծառայության թվով **1** թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքների իրականացումը և հաստատված ժամանակացույցի համաձայն՝ մրցույթն անցկացնելու մասին հայտարարության հրապարակումը՝ http://www.azdarar.am Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.

3.2 Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչությանը՝ ապահովել սույն որոշման 3.1. կետում նշված հայտարարության հրապարակումը՝ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում (www.yerevan.am):

4. Ընդունել ի գիտություն, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման համայնքային ծառայության թվով **1** թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց

փաստաթղթերն ընդունվելու են Երևանի քաղաքապետարանի՝ Արգիշտիի փողոց, հ.1 հասցեում գտնվող վարչական շենքի հ.212 սենյակում:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկությամբ կարող են հանձնել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

6.Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
2024թ. ապրիլի 9-ի
հ. 1353-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Հ/Հ	Համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումը	Ծածկագիրը	Մրցույթ անցկացնելու օրը և ժամը	Հայտարարության հրապարակման օրը
1.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետի տեղակալ	13-78	16.05.2024թ. ժամը՝ 11.00	16.04.2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**